«Տրավմա և վերականգնում» գիրքը ներկայացնում է երկու տասնամյակի հետազոտության և սեռական ու ընտանեկան բռնության գոհերի հետ տարված կլինիկական աշխատանքի արդյունքները: Այն նաև անդրադառնում է շատ այլ տրավմա տարած մարդկանց, մասնավորապես պատերազմի վետերանների և ֆաղափական ահաբեկման գոհերի հետ գնալով ահող վտրձառություններին: Այս գիրքը հանրային և մասնավոր աշխարհների, անհատի և համայնքի, տղամարդկանց և կանանց միջև կապերը վերականգնելու մասին է: Սա գիրք է ընդհանրությունների մասին, ընդհանրությունների բոնաբարություն վերապրողների և պատերազմի վետերանների, խոշտանգումների ենթարկված կանանց և ֆաղափական բանտարկյալների, ազգերի իշխող բռնակալների ստեղծած խոշոր կենտրոնացման համբարները վերապրողների և իրենց տներում իշխող բռնակալների ստեղծած վտֆր ու թափնված կենտրոնացման համբարները վերապրողների միջև:

Սուսկալի դեպքերի միջով անցած մարդիկ տառապում են կանխատեսելի հոգեկան վնասից:

Գոյություն ունի տրավմատիկ խանգարումների սպեկտր, որը ընդգրկում է մեկ անհաղթահարելի դեպքի ազդեցություններից մինչև երկարաժամկետ և կրկնվող բուրքյան ավելի բարդ ազդեցությունները:

Հաստատված ախտորոշիչ հղացքները, հատկապես ավելի հաճախ կանանց շրջանում ախտորոշվող սուր

անձնային խանգարումները, ընդհանուր առմամբ հաշվի չեն առել գոհացումի (victimization) ազդեցության

աստիճանը: Գրքի առաջին մասը նկարագրում է մարդու՝ տրավմատիկ դեպքերին ադապտացվելու սպեկտրը

և նոր անվանում է տալիս այն հոգեկան խանգարումներին, որոնք ի հայտ են գալիս երկարաժամկետ ու

կրկնվող բռնություններ վերապրողների մոտ:

Տրավմայի ախտանիշներն ունեն հիմնական ընդհանուր հատկություններ, այդ իսկ պատճառով

վերականգնման ընթացքը ևս հետևում է ընդհանուր ուղու: Վերականգնման հիմնական փուլերն են՝

ապահով միջավայրի հաստատումը, տրավմայի պատմության վերականգնումը և վերապրողի ու նրա

համայնքի միջև կապի վերականգնումը: Գրքի երկրորդ հատվածում համառոտ նկարագրվում է առողջացման

ընթացքը, ինչպես նաև առաջարկվում է կիրառել նոր հղացական շրջանակ՝ տրավմայի ենթարկված

մարդկանց հետ հոգեթերապիայի համար: Ինչպես տրավմատիկ խանգարումների առանձնահատկությունները,

այնպես էլ բուժման սկզբունքները ներկայացված են վերապրողների վկայությունների և տարբեր

գրականություններից բերված դեպքերի օրինակների հետ: Այս գրքի հետազոտական աղբյուրներն ընդգրկում

են ինցեստ վերապրողների հետ իմ ավելի վաղ շրջանում կատարած հետազոտությունները, ինչպես նաև

համեմատաբար ավելի նոր ուսումնասիրություններս՝ սահմանային անձնային խանգարման մեջ մանկության

տրավմայի դերի վերաբերյալ: Գրքի բժշկագիտական աղբյուրների հիմքում ընկած է իմ քսան տարվա

աշխատանքային փորձը ֆեմինիստական մտային առողջության կլինիկայում և տաս տարվա ուսուցչի և տեսուչի աշխատանքը համալսարանական հիվանդանոցում:

Գրքի առանցքում տրավմա վերապրողների վիճակները են: Գաղտնիություն պահպանելու համար, ես բոլոր տեղեկություն հաղորդողներին ծածկանուններ եմ տվել՝ բացառությամբ այն հոգեթերապևտների և բուժաշխատողների, ովքեր հարցազրույց են տվել իրենց գործունեության մասին, և այն վերապրողների, որոնք արդեն իսկ իրենց հանրայնորեն հանաչելի են դարձրել: Այստեղ հանդիպող պատմությունները հորինված են, յուրաքանչյուրը համապատասխան է՝ կազմված տարբեր հիվանդների, այլ ոչ թե միայն մեկ անձի փորձառություններից:

Վերապրողները մեզ մասնատված կտորները վերկապելու, պատմությունը վերակառուցելու, ներկայիս ախտահանների բացատրությունը անցյալի դեպքերի լույսի ներքո գտնելու մարտահրավեր են նետում: Ես փորձել եմ այստեղ մեկտեղել տրավմայի վերաբերյալ կլինիկական և հասարակական հայացքներն՝ առանց գոհաբերելու ոչ անհատական փորձառության բարդությունը, ոչ էլ ֆաղափական համատեքստի խորությունը: Փորձ եմ արել միավորել թվացյալ տարամետ գիտելիքի պաշարները և ձևավորել հասկացություններ, որոնք հավասարապես կիրառելի են թե՛ ընտանեկան և սեռական կյանքի

փորձառությունների՝ ավանդաբար կանանց հասցեագրվող ուղորտներում, և թե՛ պատերազմի և ֆաղափական

կյանքի փորձառությունների՝ ավանդաբար տղամարդկանցը համարվող բնագավառներում:

Այս գիրքը հայտնվում է մի այնպիսի ժամանակ, երբ սեռական և ընտանեկան կյանքի տարածված

հրեշագործությունների մասին հանրային ֆննարկումը հնարավոր է դարձել կանանց շարժման շնորհիվ, և

երբ ֆաղափական կյանքի տարածված հրեշագործությունների մասին ֆննարկումը իրականություն է դարձրել

մարդու իրավունքների պաշտպանության համար շարժումը: Ակնկալում եմ, որ գիրքը կլինի վիճահարույց.

նախ, քանի որ գրված է Ֆեմինիստական հայեցակետից. երկրորդ, քանի որ վիճարկում է հաստատված

հիմնական ախտորոշիչ հասկացությունները. և երրորդ, և գուցե ամենակարևորը, որովհետև այն խոսում է

սարսափելի երևույթների մասին, բաներ, որոնց մասին ոչ ոք չի ցանկանում լսել: Ես փորձել եմ իմ

գաղափարները հաղորդել մի լեզվով, որը պահպանում է կապերը, լեզու, որը հավատարիմ է մնում թե՛ իմ

մասնագիտության անզգացմունքային տրամաբանական ավանդույթներին, և թե՛ բռնության ու

բռնաբարության ենթարկված մարդկանց զգացմունքային պահանջներին: Ես փորձել եմ գտնել մի լեզու, որը

կկարողանա դիմակայել երկնաձողության հրամայականներին և թույլ կտա մեզ բուռնիս փոքր-ինչ ավելի

մոտենալ անասելիին առերեսվելուն:

## Գլուխ 1.

## Մոռացված պատմություն

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏՐԱՎՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ունի ուշագրավ պատմություն՝ լի էրբեմնակի ամենգիայի դեպքերով: Բուռն հետազոտության շրջաններին փոխարինելու են գալիս մոռացումի շրջանները: Անցած դարում բազմիցս նմանատիպ ուսումնասիրություններ ձեռնարկվել և շուտով կիսատ են թողնվել, շատ ավելի ուշ կրկին վերաձեռնարկվելով: Հիսուն կամ հարյուր տարվա վաղեմության դասական գործերը հաճախ ընթերցվում են ժամանակակից գործերի պես: Թեև այս բնագավառը փաստացի ունի հարուստ ավանդույթ, այն պարբերաբար մասնավոր է մոռացության և, ուրեմն, պետք է պարբերաբար էլ վերագտնվի:

Այս ընդմիջվող ամենգիան նորաձևության մեջ տեղի ունեցող սովորական փոփոխությունների արդյունք է, որոնք ազդում են մտքի հետ առնչվող ցանկացած գործունեության վրա: Հոգեբանական տրավմայի ուսումնասիրությանը հետաքրքրության պակասը չի սպառնում: Պարզապես թեման առաջացնում է այնպիսի սուր տարածայնություններ, որ այն պարբերաբար վեր է ածվում բանադրանքի: Հոգեբանական տրավմայի ուսումնասիրությունը բազմիցս տարել է անպատկերացելի տիրույթներ և հավատքի հիմնարար հարցերին բախվելով իջել ընդհատակ:



Ուսումնասիրել հոգեբանական տրավման՝ նշանակում է առերևակել բնության մեջ մարդու խոցելիության և մարդկային բնույթում եղած չարիք գործելու ունակության հետ: Ուսումնասիրել հոգեբանական տրավման՝ նշանակում է վկա լինել սարսափելի դեպքերի: Երբ այդ դեպքերը բնական աղետներ են կամ Աստծո ձեռքի գործը, վկաները պատրաստակամորեն կարեկցում են գոհերին: Սակայն, երբ տրավմատիկ դեպքերը մարդու ծրագրածն են, վկաները հայտնվում են գոհի և ռեպրոբի միջև եղած հակամարտության կենտրոնում: Այստեղ չեզոք դիրք ընդունելն անհնար է: Ականատեսը ստիպված է ընտրություն կատարել:

Շատ ավելի գայթակղիչ է ռեպրոբի կողմն անցնել: Ռեպրոբը ականատեսից միայն մի բան է խնդրում՝ ոչինչ չձեռնարկել: Նա դիմում է չարիքը չտեսնելու, չլսելու և չասելու համամարդկային ցանկությանը: Զուհը, ընհակառակը, ականատեսից խնդրում է կիսել ցավի բեռը: Զուհը պահանջում է գործել, ներգրավվել, և հիշել: Հոգեբույժ Լեո Այտինգերը, ով ուսումնասիրել է նացիստների կենտրոնացման համբարները վերապրողներին, այսպես է նկարագրում գոհի և ականատեսի շահերի դաժան բախումը.

«Համայնքը ցանկանում է մոռանալ պատերազմի ու գոհերին մասին. յուրաքանչյուր ցավոտ և տհաճ բան ծածկվում է մոռացության հողով: Երկու կողմերը հայտնվում են դեմ առ դեմ. մի կողմում գոհերն են, ովքեր, գուցե և, ցանկանում են մոռանալ, սակայն անկարող են. մյուս կողմում՝ այն բոլոր նրանք, ովքեր ունեն

մոռանալու ուժեղ և հաճախ անգիտակից շարժումներ և ուժեր ջանադրաբար ցանկանում են մոռանալ ու  
հաջողում են: Հակադրությունը... երկու կողմերի համար էլ հաճախ շատ ցավալի է: Ամենաթույլ կողմը  
...մնում է պարտվող այս լուռ և անհավասար երկխոսությունում»:

Գործած հանցանքների պատասխանատվությունից խուսափելու համար, սերագործը հնարավոր ամեն  
ինչ անում է մոռացմանը նպաստելու: Գաղտնիությունը և լուրջությունը սերագործի պաշտպանական  
առաջնային զենքերն են: Եթե գաղտնիությունը չի գործում, սերագործը հարձակվում է գոհի հեղինակության  
վրա: Եթե նա չի կարողանում գոհին ամբողջովին լռեցնել, ապա ամեն ինչ անում է համոզված լինելու, որ  
վերջինիս ոչ ոք չի լսի: Այդ նպատակով ներկայացնում է փաստարկների մի երկար շարան, սկսած  
ամենապարզ բացահայտ հերքումից մինչև ամենաբարդ և դասական ռացիոնալացում: Ամեն  
հրեշագործությունից հետո կարելի է լսել նույն սպասելի արդարացումները. նման բան երբեք չի եղել, գոհը  
ստում է, գոհը չափազանցնում է, գոհն է կատարվածի համար մեղավոր և, որ եղածը եղած է, ժամանակն է  
մոռանալ անցյալը և նայել առաջ: Ինչքան ազդեցիկ է սերագործը, այնքան ավելի արտոնված է  
իրականությունն ուզածի պես սահմանելու և անվանելու, և նրա փաստարկները թվում են շատ ավելի  
անհերքելի:

Ոնրագործի բերած վաստարկները ականատեսի համար դառնում են անդիմադրելի, երբ նա դրանց առերեսվում է մեն-մենակ: Առանց աջակցող հասարակական միջավայրի, ականատեսը սովորաբար տեղի է տալիս կատարվածը անտեսելու գայթակղությանը: Սա ճիշտ է նույնիսկ այն դեպքում, երբ գոհը հասարակության գնահատված և իդեալականացված անդամ է: Ամեն պատերազմի ժամանակ զինվորները, նույնիսկ նրանք, ում վերաբերվում են որպես հերոսների, դառնացած բողոքում են, որ ոչ ոք չի ցանկանում լսել իրական հեմարտությունը պատերազմի մասին: Երբ գոհն արդեն իսկ արժեգրկված է (կին, երեխա), նա կարող է հայտնաբերել, որ իր կյանքի ամենատրավմատիկ դեպքերը կատարվում են հասարակության կողմից վավերացված իրականության սահմաններից դուրս: Նրա փորձառությունը դառնում է անասելի:

Հոգեբանական տրավմայի ուսումնասիրությունը պետք է մշտապես պայքարի գոհին վարկաբեկելու կամ անտեսանելի դարձնելու այս սովորույթի դեմ: Ուրտի պատմության ողջ ընթացքում շարունակ վեճ է ծավալվել այն մասին, թե արդյոք հետտրավմատիկ դրությանը պացիենտներն իրավասու են արժանանալ հոգատար և հարգալից վերաբերմունքի, թե արժանի են ֆամահրանքի, արդյոք նրանք իսկապես տառապում են, թե ուղղակի ձևացնում են, արդյոք նրանց պատմություններն իրական են, թե կեղծ, և եթե կեղծ են, արդյոք երևակայական են, թե նենգաբար հորինված: Չնայած հոգեբանական տրավմայի երևույթները

վաստագրող հսկայական գրականության գոյությանը, տարածայնությունը դեռևս կետրոնացած է այն

պարզագույն հարցի վրա, թե արդյո՞ք այս երևույթները հավաստի են և իրական:

Ոչ միայն պացիենտների, այլ նաև հետաքալմատիկ վիճակները հետազոտողների

արժանահավաստությունը շարունակաբար վիճարկվում է: Բուժաշխատողները, ովքեր տրավմայի ենթարկված

մարդկանց լսում են չափազանց երկար և ուշադիր հաճախ կասկածելի են դառնում իրենց իսկ

գործընկերների համար, ասես թե այդ շփումից վարակված լինեն: Հետազոտողները, ովքեր անցնում են

իրենց ոլորտում ընդունված սահմանները, հաճախ ենթարկվում են մի տեսակ մասնագիտական

մեկուսացման:

Տրավմատիկ իրականությունը գիտակցության մեջ պահելը պահանջում է այնպիսի հասարակական

համատեֆստ, որը կատարի և կպաշտպանի գոհին և նրան ու վկային կկապի ընդհանուր դաշինքով: Զոհ

դարձած անձի համար այդ հասարակական համատեֆստը ստեղծում են ընկերների, սիրելի մարդու և

ընտանիքի հետ հարաբերությունները: Իսկ ընդհանրապես հասարակության համար, հասարակական

համատեֆստը կառուցվում է անգործերին ձայն տվող ֆաղաֆական շարժումների կողմից:

Հետևաբար, հոգեբանական տրավմայի կանոնավոր ուսումնասիրությունը կախված է ֆաղաֆական

շարժման աջակցությունից: Ավելին, հարցը, թե արդյո՞ք այդ տեսակ ուսումնասիրություն կարող է տարվել

կան հանրայնորեն ֆենարկվել՝ ինֆնին ֆաղափական է: Պատերազմի տրավմայի ուսումնասիրությունը

դառնում է օրինական միայն այն համատեֆստում, որը վիճարկում է պատերազմում երիտասարդ

տղամարդկանց գոհաբերումը: Տրավմայի ուսումնասիրությունը սեռական և ընտանեկան կյանքում

օրինական է համարվում միայն կանանց և երեխանների ստորակարգումը վիճարկող համատեֆստում:

Ուրտում առաջխաղացումներ են արձանագրվում միայն այն ժամանակ, երբ դրանք աջակցություն են

ստանում այնպիսի ֆաղափական շարժումից, որը բավականաչափ ուժ ունի հետազոտողների և պացիենտների

միջև դաշինքը օրինականացնելու և լուեցման ու հերքումի սովորական հասարակական գործընթացներին

հակադդելու համար: Մարդու իրավունքների համար հզոր ֆաղափական շարժումների բացակայության

պարագայում, վկայելու ակտիվ գործընթացը անխուսափելիորեն տեղի է տալիս մոռանալու ակտիվ

գործընթացին: Ճնշումը, դիտոցացիան և ժխտումը առկա են ինչպես հասարակության, այնպես էլ անհատի

գիտակցության մեջ:

Անցյալ դարում երեք անգամ հանրային գիտակցություն է մուտք գործել հոգեբանական տրավմայի

որոշակի տեսակ: Եվ ամեն անգամ, այդ տրավմայի տեսակի հետազոտությունը ծաղկում է ապրել

ֆաղափական շարժման հետ մեկտեղ: Առաջինը հիստերիան էր՝ կանանց արբեսիպային հոգեբանական

խանգարումը: Դրա ուսումնասիրությունը սկսվեց տասնիններորդ դարի վերջում Ֆրանսիայում

հանրապետական ու հակադեմոկրատիկ քաղաքական շարժումից: Երկրորդը պատերազմական կամ մարտական

նկրագն էր: Դրա ուսումնասիրությունը սկսվել է Անգլիայում և ԱՄՆ-ում երկրորդ համաշխարհային

պատերազմից հետո և իր գագաթնակետին հասել Վիետնամի պատերազմից հետո: Դրա քաղաքական

համատեքստը պատերազմի պաշտամունքի փլուզումն էր և հակապատերազմական շարժման զարգացումը:

Հանրային գիտակցության մեջ հայտնված վերջին և ամենից նոր տրավման սեռական և ընտանեկան

բռնությունն է: Դրա քաղաքական համատեքստը Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում

ֆեմինիստական շարժումն է: Հոգեբանական տրավմայի մեր ժամանակակից պատկերացումները հիմնված են

այս երեք առանձին ձևերի հետազոտության համակցության վրա:

### **Հիստերիայի հերոսական դարաշրջանը**

Տասնիններորդ դարի վերջին, շուրջ երկու տասնամյակ, հիստերիա անվանումն ունեցող

խանգարումը դարձավ լուրջ ուսումնասիրության առարկա: Հիստերիան այդ ժամանակ այնքան լայն

հանաչում ունեցող հասկացություն էր, որ ոչ մեկի մտքով չէր էլ անցնում այն հետևողականորեն

սահմանել: Մի պատմաբանի խոսքերով՝ «փաստից դար շարունակ հիստերիան համարվել է տարօրինակ

հիվանդություն՝ անկայուն և անհասկանալի ախտանիշներով: Շատ բժիշկներ հավատացած էին, որ այն կանանց հատուկ հիվանդություն էր և ձևավորվում էր արգանքում»: Այստեղից էլ անվանումը՝ հիստերիա : Ինչպես մեկ այլ պատմաբան է բացատրում՝ հիստերիան «դրամատիկ բժշկական փոխաբերություն էր այն ամենի համար, ինչ տղամարդիկ խորհրդավոր կամ անկառավարելի էին համարում հակառակ սեռի մեջ»:

Հիստերիայի ուսումնասիրության նախահայրը ֆրանսիացի մեծ նյարդաբան Ժան-Մարտեն Շարկոն էր: Նրա թագավորությունը Սալպետրիերն էր՝ հին, ընդարձակ հիվանդանոցային համալիր, որը երկար ժամանակ եղել էր Փարիզի ամենաթշվառ աշխատավորների՝ մուրացկանների, մարմնավաճառների և խելագարներ ապաստանը: Շարկոն այս լքված կառույցը վերափոխեց՝ այն դարձնելով ժամանակակից գիտության տանար, և նյարդաբանության ու հոգեբուժության նորաստեղծ բնագավառներին ամենատաղանդավոր և հավակնոտ մարդիկ ուղևորվեցին Փարիզ՝ վարպետի հետ սովորելու: Դեպի Սալպետրիեր ուխտագնացություն կատարած անվանի բժիշկների շարքում էին Պիեռ Ժանեն, Ուիլյամ Ջեյմսը և Զիգմունդ Ֆրոյդը:

Հիստերիայի ուսումնասիրությունը հանրության երևակայությունը շարժեց՝ ընկալվելով որպես անիմանալի տիրույթ տանող հանդուգն ֆայլ: Շարկոյի հետազոտությունները հայտնի էին ոչ միայն բժշկության ասպարեզում, այլ նաև դրանից դուրս՝ գրականության և ֆաղափականության ավելի մեծ

երջանակներում: Նրա «Երեւոյի օրվա դասախոսություններ»-ը թատերական բեմադրություններ էին, որոնք դիտելու էր գալիս «Փարիզի չորս կողմից հավաքված բազմաթիվ հադիսատեսը. գրողներ, բժիշկներ, առաջնակարգ դերասաններ ու դերասանուհիներ, նորածն դեմիմոններ, բուրբ համակված հիվանդագին հետաքրքրասիրությամբ»: Այս դասախոսությունների ընթացքում Շարկոն հիստերիայի վերաբերյալ իր բացահայտումները ներկայացնում էր կենդանի ցուցադրումների միջոցով: Ցուցադրումներին մասնակցող պացիենտները երիտասարդ կանայք էին, որոնք փախչելով անվերջանալի բռնությունից, շահագործումից ու բռնաբարությունից, ապաստան էին գտել Սալպետրիերում: Այս ապաստանը նրանց տալիս էր ապահովության ու պաշտպանվածության զգացում, մի բան, որ նախկինում երբեք չէին ունեցել: Ընտրյալ մի խումբ կանանց էլ, ովքեր դարձել էին Շարկոյի աստղային դերասանները, այս ապաստանը հոչակին մոտ մի բան բերեց:

Շարկոն գնահատանքի արժանացավ հիստերիայի հետազոտությունը ձեռնարկելու իր խիզախությունն համար: Նրա հեղինակությունը արժանահավատություն բերեց մի դաշտի, որը համարվել էր լուրջ գիտական հետազոտության երջանակներից դուրս: Շարկոյից առաջ համարվում էր, որ հիստերիկ կանայք պարզապես ձևացնում էին, և նրանց բուժելը թողնված էր հիպնոսով և ժողովրդական բժշկությամբ զբաղվողներին:

Շարկոյի մահվան ժամանակ Ֆրոյդը նրան մեծարեց որպես տանջվածների ազատագրիչ հովանավոր.



«Հիստերիկի որևէ ասած հավատի չէր արժանանում: Առաջին բանը, որ Շարկոն արեց, թեմայի արժանապատվության վերականգնում էր: Այն ֆանտիզիկան ժպիտը, որով պացիենտներին ամենուր դիմավորում էին, աստիճանաբար անհետացավ մարդկանց դեմքից: Պացիենտն այլևս անպայմանորեն ձևացնող չէր, քանզի Շարկոն իր հեղինակության ողջ կռույկ անցել էր հիստերիա կոչվող երևույթի նեմարիտության և օբյեկտիվության կողմը»:

Շարկոյի մոտեցումը հիստերիային, որը նա անվանում էր «Մեծագույն ներք», դասակարգողի մոտեցում էր: Նա ընդգծում էր ուշադիր դիտարկման, նկարագրության և դասակարգման կարևորությունը: Նա հիստերիային բնորոշ ախտանիշները մանրամասնորեն փաստագրել է ոչ միայն գրի, այլ նաև գծագրերի և լուսանկարների միջոցով: Շարկոն կենտրոնացել էր հիստերիայի այն ախտանիշների վրա, որոնք նմանվում էին նյարդային վնասվածքի՝ շարժիչ համակարգի կաթված, զգայությունների կորուստ, ջղաձգություններ և ամենեզիա: Մինչև 1880թ.-ը, նա արդեն ցույց էր տվել, որ այս ախտանիշները հոգեբանական էին, քանի որ դրանք կարող էին արհեստականորեն առաջացվել և թուլացվել հիպնոսի միջոցով:

Թեև Շարկոն շատ մեծ ուշադրություն էր դարձնում հիստերիկ պացիենտների ախտանշաններին, նրան ամենևին հետաքրքիր չէր նրանց ներաշխարհը: Նրանց հույզերը Շարկոն դիտարկում էր իբրև

ախճատնեացիներ, որոնք պետք էր դասակարգել: Նա նրանց խոսքը նկարագրում (բնորոշում) էր որպես

«ձայնարկում»: Նրա մոտեցումն իր պացիենտների նկատմամբ ակնհայտ է իր «Երեբժարքի օրվա

դասախոսություններ»-ից մեկի բառացի վերապատումից, որի ժամանակ նա հիպնոտիկ տրանսի մեջ գտնվող

երիտասարդ կնոջը օգտագործում է ցուցադրելու հիստերիայի ջղաձգային գրոհը:

Շարկո. Եկեք կրկին սեղմենք հիստերոզեն կետը: (Տղամարդ օգնականը շեշտվում է պացիենտին

ձվարանային շրջանում): Ահա, նորից նույնը: Երբեմն պացիենտները նույնիսկ կծում են լեզուն, սակայն

սա հագավադեպ է լինում: Ուշադրություն դարձրեք կորացած թիկունքին, որը շատ լավ նկարագրված է

դասագրքերում:

Պացիենտ. Մայրի՛կ, ես վախենում եմ:

Շարկո. Նկատե՛ք հուզական պոռթկումը: Եթե թույլ տանք, որ այս կերպ շարունակվի, ապա շուտով

կվերադառնանք էպիլեպտիկ վարքին... (Պացիենտը կրկին բացականչում է. «Ա՛խ, մայրի՛կ»):

Շարկո. Կրկին անգամ ուշադրություն դարձրե՛ք այս ճիշերին: Կարելի է մտածել, որ սա անտեղի

բարձրացված ազմուկ-աղաղակ է:

Շարիայի հետևորդների գլխավոր նպատակն էր վերջինիս գերազանցել՝ ցույց տալով հիստերիայի առաջացման պատճառը: Մրցակցությունը հատկապես թեժ էր ժանեյի և Ֆրոյդի միջև: Յուրաքանչյուրն իր հերթին ցանկանում էր առաջինը կատարել այդ մեծ հայտնագործությունը: Իրենց նպատակների իրականացման ճանապարհին այս երկու հետազոտողներին պարզ դարձավ, որ հիստերիկներին լուր դիտելն ու դասակարգելը բավարար չէր. հարկավոր էր նաև խոսել նրանց հետ: Մի կարճ տասնամյակ գիտության տղամարդիկ ականջ դրեցին կանանց՝ դրանից առաջ և դրանից ի վեր նմանը չունեցող նվիրվածությամբ և հարգանքով: Քիչ չէին հանդիպում հաճախ ժամեր ձգվող ամենօրյա հանդիպումները հիստերիկ պացիենտների հետ: Այս շրջանի առանձին դեպքերի ուսումնասիրությունները (case studies) ավելի շատ հիշեցնում են բժշկի և պացիենտի համագործակցություն:

Այս հետազոտությունները ավեցին իրենց պատուը: Արդեն 1890-ականների կեսերին, ժանեն Ֆրանսիայում, իսկ Ֆրոյդն իր համագործակից ժոզեֆ Բրոյերի հետ Վիեննայում, միմյանցից անկախ, եկան զարմանալիորեն նման ձևակերպումների. հիստերիան մի վիճակ էր, որն առաջանում էր հոգեբանական տրավմայի հետևանքով: Տրավմատիկ դեպքերին անտանելի զգացմունքային արձագանքներն առաջ էին բերում գիտակցության այլափոխված վիճակ, որն իր հերթին առաջացնում էր հիստերիայի ախտանիշներ:

Ժանեն այս գիտակցության այլափոխությունն անվանեց «դիսոցիացիա»: Բրայերը և Ֆրոյդը այն կոչեցին

«երկակի գիտակցություն»:

Եվ Ժանեն, և Ֆրոյդը գիտակցում էին հոգեբանական տրամաշի և հիպնոսի առաջացրած գիտակցության այլափոխված վիճակների միջև եղած էական նմանությունը: Ժանեն հավատացած էր, որ դիսոցիացիայի կամ հիպնոսիկ տրանսի ենթարկվելու կարողությունը հոգեբանական թուլության և ներշնչողունակության նշան էր: Բրայերը և Ֆրոյդը, հակառակը, պնդում էին, որ հիստերիան և դրա հետ առնչվող գիտակցության այլափոխությունները կարելի էր հանդիպել «փայլուն ինտելեկտի, անկոտրում կամֆի ուժի, վառ անհատականության և բարձր բնագրատական կարողությունների տեր մարդկանց մոտ»:

Եվ Ժանեն, և Ֆրոյդը գիտակցում էին, որ հիստերիայի ախտանիշները ներկայացնում էին խիստ անհանգստացնող դեպքերի բողբոջված ներկայացումներ, որոնք հիշողությունից վտարվել էին: Ժանեն իր հիստերիկ պացիենտներին նկարագրում էր որպես «ենթագիտակցական սևեռուն գաղափարների», տրամատիկ դեպքերի հիշողությունների կամդից կառավարվող: Բրայերը և Ֆրոյդը, իրենց անմահ եզրահանգման մեջ, գրել էին, որ «հիստերիկներն առավելապես տառապում են վերհուշերից»:

Արդեն 1890-ականների կեսերին այս հետազոտողները հայտնաբերել էին, որ հիստերիայի ախտանիշանները հնարավոր էր մեղմել, երբ տրամատիկ հիշողությունները, ինչպես նաև դրանց ուղեկցող

ուժգին զգացմունքները, վերականգնվում էին և բառերով արտահայտվում: Բուժման այս մեթոդը դարձավ

ժամանակակից հոգեթերապիայի հիմքը: Ժանեն այս մեթոդն անվանեց «հոգեբանական վերլուծություն»:

Բրոյերը և Ֆրոյդն այն կոչեցին «աբուեակցիա» կամ «կատարիս», իսկ ավելի ուշ Ֆրոյդն այն անվանեց

«հոգեվերլուծություն»: Սակայն ամենապարզ և թերևս լավագույն անվանումը հորինել էր Բրոյերի

պացիենտներից մեկը՝ տաղանդավոր, խելացի և ծանր խանգարում ունեցող մի կին, ում նա տվել էր Աննա

Օ. կեղծանունը: Նա Բրոյերի հետ իր խիստ անձնական բնույթի երկխոսությունը անվանում էր

«խոսաբարձություն»:

Բժշկի և հիվանդի միջև այս համագործակցությունը վերածվեց փնտրումի, որտեղ հիստերիայի

առեղծվածի բացահայտումը կարելի էր գտնվել պացիենտի անցյալի հոգնաջան վերակառուցման միջոցով:

Ժանեն իր պացիենտներից մեկի հետ աշխատանքի նկարագրությունում նկատում է, որ բուժմանը

գուզընթաց, նոր տրավմաների ծածկագերծումը տանում էր ավելի հին դեպքերի ուսումնասիրության:

«Վերացնելով պատրանքների մակերեսային շերտը, ես խթանեցի/ հին և կաշուն-սևեռուն մտքերի

հայտնվելուն, որոնք դեռևս նրա մտքի հատակում էին: Դրանք իրենց հերթին անհետացան, այսպիսով

մեծապես բարելավվելով պացիենտի վիճակը»: Բրոյերն Աննա Օ.-ի հետ իր աշխատանքի

նկարագրությունում խոսում էր «հիշողության թելով ետ գնալու» մասին:

Այս թելով ամենից հեռուն գնաց Ֆրոյդը, և յուրաքանչյուր դեպքում՝ առանց բացառության, այն նրան հանգեցրեց կանանց սեռական կյանքի հետազոտությանը: Չնայած նրան, որ գոյության ուներ հնագույն բժշկական ավանդույթ, որը հանաչում էր հիստերիայի ախտանիշների կապը կնոջ սեռականության հետ, Ֆրոյդին ուղղորդողները՝ Շարկոն և Բրոյերը, խորը կասկածանքով էին վերաբերվում հիստերիայի առաջացման մեջ սեռականության դերին: Ֆրոյդն ինքն ի սկզբանե ընդդիմանում էր այս գաղափարին.

«Երբ սկսեցի երկրորդ պացիենտին գննել...այն միտքը, որ հիստերիայի հիմքում ընկած է սեռական նկրագը, շատ հեռու էր ինձնից: Ես դեռ նոր էի դուրս եկել Շարկոյի դպրոցից, և հիստերիայի և սեռականություն թեմայի կապին վերաբերվում էի որպես մի տեսակ անարգանքի՝ այնպես, ինչպես որ կին պացիենտներն իրենք»:

Իր պացիենտների արձագանքներին այս ապրումակցումը բնորոշ է հիստերիայի մասին Ֆրոյդի վաղ շրջանի գործերին: Նրա պացիենտների դեպքերի պատմություններից կարելի է տեսնել մի մարդու, որը համակված էր այնպիսի բուռն հետաքրքրասիրությամբ, որ պատրաստ էր հաղթահարել իր պաշտպանական կեցվածքը և պատրաստակամ էր լսել: Այն, ինչ նա լսեց սարսափելի էր: Նրա պացիենտները նրան շարունակաբար պատմում էին սեռական ոտնձգությունների, չարաշահումների և ինցեստի մասին:

Հիշողության թելին հետևելով, Ֆրոյդը և նրա պացիենտները ծածկագերծեցին մանկության կարևորագույն

տրավմատիկ դեպքեր, որ թափնված էին ավելի թարմ, հաճախ համեմատաբար անկարևոր

փորձառությունների տակ, և հենց որոնք էլ իրականում առաջ էին բերել հիստերիայի ախտանշանները:

Այդպես 1896թ.-ին, Ֆրոյդը հավատացած էր, որ գտել է հիստերիայի սկզբնաղբյուրը: Տասնութ դեպքերի

նկարագրությունները պարունակող «Հիստերիայի ծագումնաբանությունը» վերնագրով հոդվածում, նա արեց

աննախդեպ մի պնդում. «Հետևաբար, ես առաջ եմ ֆաշուն մի վարկած, ըստ որի հիստերիայի

յուրաքանչյուր դեպքի հիմքում ընկած է *մեկ կամ ավելի նախահասուն սեռական փորձառության*

*պատահարներ*, որոնք պատկանում են մանկության ամենավաղ տարիներին, սակայն որոնք կարող են

վերարտադրվել հոգեվերլուծության միջոցով՝ հակառակ դրանք բաժանող երկար ժամանակահատվածին: Ես

հավատացած եմ, որ սա կարևորագույն հայտնաբերում է, նյարդախտաբանության այդ մութ հարցի

պատասխանը»:

Մեկ դար անց էլ այս հոդվածը դեռ մրցակցում է մանուկ տարիքում սեռական չարաշահման

ենթարկվելու հետևանքների մասին ժամանակակից կլինիկական բնութագրումների հետ: Այն փայլուն,

կարեկցող և սահուն ոճով փաստարկված, մանրամասնորեն պատհասարանված փաստագրություն է: Դրա

հաղթական վերնագիրը և ցնծալի ոճը ենթադրում են, որ Ֆրոյդը իր այս ներդրումը համարում էր ոչորտի

մեծագույն նվաճում:

Փոխարենը, «Հիստերիայի ծագումնաբանությունը» հոդվածի հրատարակմամբ եկավ այս

հետազոտական աշխատանքի ավարտը: Մեկ տարի անց, Ֆրոյդը գաղտնի կերպով հրաժարվեց հիստերիայի ծագման տրավմատիկ տեսությունից: Նրա նամակագրություններից պարզ է դառնում, որ նրան խորապես անհանգստացնում էին այն ծայրահեղ սոցիալական հետևանքները, որ իր այս վարկածը կարող էր ունենալ: Հիստերիան կանանց շրջանում այնքան տարածված էր, որ եթե պարզվեր, որ իր պացիենտների պատմությունները ճիշտ էին, և նրա տեսությունն էլ՝ անսխալ, ապա նա ստիպված էր լինելու եզրակացնել, որ այն, ինչ անվանում էր «երեխաների դեմ այլասերված գործողություններ» տարածված էին ոչ միայն Փարիզի աշխատավորների շրջանում, որտեղ նա առաջին անգամ սկսել էր ուսումնասիրել հիստերիան, այլ նաև Վիեննայի հարզված բուրժուա ընտանիքներում, ուր իր գործունեությունն էր հաստատել: Այս միտքը պարզապես անընդունելի էր: Այն արժանահավատ չէր կարող լինել:

Այս երկընտրանքին բախվելով՝ Ֆրոյդը դադարեց իր կին պացիենտներին լսել: Շրճադարձային հանդիսացող պահը փաստագրված է Դորայի հետ հայտնի դեպքի ուսումնասիրությունում: Այդ դեպքը, որ եղավ Ֆրոյդի հիստերիայի ուսումնասիրության դեպքերից վերջինը, ավելի շատ հիշեցնում է բժշկի և պացիենտի միջև սրամտության մենամարտ, քան թե համագործակցային ձեռնարկում: Ֆրոյդի և Դորայի հարաբերությունը բնութագրվել է որպես «հուզական մենամարտ»: Այս դեպքում, Ֆրոյդը դեռևս ընդունում



է իր պացիենտի վորձառության իրական լինել՝ դեռահաս Դորան իր հոր մշակած սեռական

խարդավանքների գոհն էր: Հայրն, ըստ էության, նրան իր ընկերներին էր առաջարկում որպես սեռական

խաղալիք: Ֆրոյդը, սակայն, հրաժարվեց հաստատել Դորայի մոտ անարգանքի և նվաստացման զգացումը:

Փոխարենը, նա համառոտե՛ն պնդում էր, որ անհրաժեշտ էր կենտրոնանալ Դորայի էյոտիկ գրգռվածության

զգացումների ուսումնասիրման վրա, կարծես այդ շահագործող իրավիճակը Դորայի ցանկության

բավարարումն էր:

Նրանց համագործակցության խզումը դարձավ պատվախնդիր հետազոտողների և հիստերիկ

պացիենտների համագործակցության ժամանակաշրջանի դառն ավարտը: Գրեթե մեկ դար, այս պացիենտները

կրկին արհամարվելու ու լռեցվելու էին:

## Bibliography

- Baker, M., Saldanha, G. (Eds.). (2008, 2 nd ed.). *The Tower of Babel*. Routledge Encyclopedia of Translation Studies (21-22). London, UK: Routledge
- Barthes, R. (1967). *The Death of the Author*. Trans. Richard Howard. Retrieved from [http://www.tbook.constantvzw.org/wp-content/death\\_authorbarthes.pdf](http://www.tbook.constantvzw.org/wp-content/death_authorbarthes.pdf)
- Benjamin, W. (1923). *The Task of the Translator*. Trans. Harry Zohn. In Venuti (Ed.), (2000), *The Translation Studies Reader* (15-25). London, UK: Routledge.
- Berman, A. (1985). *Translation and the Trials of the Foreign*. Trans. Lawrence Venuti. In L. Venuti (Ed.), (2000), *The Translation Studies Reader* (284-297). London, UK: Routledge.
- Herman, J. (1992). *Trauma and Recovery*. New York: Basic Books.
- McRae, E. (September 2010). *The Role of Translators' Prefaces to Contemporary Literary Translations into English*. University of Auckland.
- Schleiermacher, F. (1813). *On the Different Methods of Translating*. Trans. Waltraud Bartscht. In R. Schulte and J. Biguenet (Eds.), (1992), *Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida* (36-54). University of Chicago Press.
- Venuti, L. (1995). *The Translator's Invisibility: A History of Translation*. New York: Routledge.
- Venuti, L. (2004). *How to Read a Translation*. *Words Without Borders*. Retrieved from <http://www.wordswithoutborders.org/article/how-to-read-a-translation>

Vinay, J.-P., Darbelnet, J. (1958). *A Methodology for Translation*. Trans. Juan C. Sager and M.-J. Hamel. In L. Venuti (Ed.), (2000), *The Translation Studies Reader* (85-93). London, UK: Routledge.